

Յամայնքային հարաբերություններ

Բողոքի միաձև ընթացակարգեր

Գլենդելի հանրային դպրոցների Ուսումնական խորհուրդը հաստատում է, որ ուսումնական ծրագրերը ղեկավարելիս կրթաշրջանն ունի նահանգային ու դաշնային օրենքներին ու կանոններին հնազանդվելու գլխավոր պատասխանատվություն: Ուսումնական խորհուրդը խրախուսում է բողոքների վաղաժամկետ լուծումը հնարավորության դեպքում: Ավելի պաշտոնական գործընթաց պահանջող բողոքների լուծման համար, ուսումնական խորհուրդը պետք է բողոքի միաձև ընթացակարգ որդեգրի, որը նշված է 5 CCR 4600-4670-ում և առկա վարչական կանոնադրության մեջ:

UCP-ի ենթակա բողոքներ

Բողոքի միաձև ընթացակարգը (UCP) պետք է օգտագործվի հետևյալ բողոքները քննելու և լուծելու համար.

1. Ցանկացած բողոք կրթաշրջանի դաշնային կամ նահանգային օրենքների ենթադրյալ խախտումների վերաբերյալ՝ չափահասների կրթության, երկարօրյա կրթության և անվտանգության ծրագրերի, գյուղատնտեսական կարիերայի տեխնիկական կրթության, համադրված կատեգորիկ օգնության ծրագրերի, դաշնային կարիերայի տեխնիկական կրթության, երեխայի խնամատարության և զարգացման ծրագրերի, փոխհատուցվող կրթության, դաշնային Յուրաքանչյուր աշակերտ պետք է առաջադիմի օրենքի, գաղթականների կրթության, մարզային Չբաղվածության կենտրոնների և ծրագրերի, Աշակերտների նվաճումների Դպրոցական ծրագրի, դպրոցի անվտանգության ծրագրերի, Կալիֆոռնիայի նահանգային նախադպրոցական ծրագրերի, Նահանգային նախադպրոցական առողջության և անվտանգության խնդիրների LEA-ում՝ արտոնագրումից ազատված, և կրթաշրջանում իրագործվող այլ ծրագրերի մասին, որոնք չեն ֆինանսավորվում տեղական հսկողության ֆոնդերից, ինչպես նշված է Կրթական օրենսգրքի 64000(a) բաժնում:
2. Անօրինական խտրականության ցանկացած բողոքները (ինչպես օրինակ խտրական ոտնձգություն, ահաբեկում կամ բռնարարք), որևէ աշակերտի, աշխատակցի կամ նահանգի կողմից ուղղակիորեն ֆինանսավորված կամ ֆինանսական օգնության կամ նպաստ ստացող կրթաշրջանի ծրագրերին կամ աշխատանքներին մասնակցող անհատի նկատմամբ, անհատի իրական կամ ենթադրյալ ռասայի կամ ազգության, մաշկի գույնի, ծագման, ազգային ակունքների, գաղթական կարգավիճակի, ցեղային ինքնության, տարիքի, կրոնի, ամուսնական, հղիության կամ ծնողական կարգավիճակի, ֆիզիկական կամ մտավոր անկարողության, սեռի, սեռային կողմնորոշման, սեռային ինքնության, սեռային արտահայտության կամ գենետիկական տեղեկությունների կամ որևէ այլ առանձնահատկության հիման վրա, որը նշված է կրթության օրենսգրքի 200 կամ 220 Մասերում, Կառավարական օրենսգրքի 11135 կամ Քրեական օրենսգրքի 422,55

Մասում, կամ նման իրական կամ ընկալական առանձնահատկությամբ անհատի կամ խմբի հետ կապի մեջ լինելու հիման վրա (5 CCR 4610):

3. Բողոք՝ նորածնին կրծքով կերակրող աշակերտների համար, դպրոցում կաթ կթելու, կրծքով կերակրելու կամ կրծքով կերակրելու հետ կապված այլ կարիքներին համապատասխան հարմարություններ չտեղծելու վերաբերյալ (Կրթության օրենսգիրք 222):
4. Բողոք՝ կրթաշրջանի կողմից հղի կամ նոր ծնող դարձած աշակերտներին համապատասխան հարմարություններով չապահովելու վերաբերյալ, որը ներկայացված է Կրթական օրենսգրքի 46015 մասում, ներառյալ դրույթները ծնողական արձակուրդի, իր նախկին դպրոցը վերադառնալու կամ այլընտրանքային կրթության ծրագրի, ցանկության դեպքում և ավագ դպրոցի 5-րդ տարում արձանագրվելու վերաբերյալ, համաձայն որի աշակերտը հնարավորություն կունենա բավարարել նահանգի և խորհրդի կողմից հաստատված դպրոցն ավարտելու պահանջները:
5. Բողոք՝ ուսումնական աշխատանքներին մասնակցելու համար աշակերտներից վճար, կանխավճար կամ այլ տեսակի գանձումներ կատարելու կանոնը խախտելու վերաբերյալ (5 CCR 4610):
6. Բողոք՝ տեղական վերահսկման և հաշվետվության ծրագրի հետ կապված պատշաճ պահանջները (Կրթության օրենսգիրք 52060-52077) խախտելու վերաբերյալ, ներառյալ ծնողների/խնամակալների համար տեղական կառավարման ֆինանսավորման բանաձևի բյուջեի վերանայումը (Կրթության օրենսգիրք 52075):
7. Բողոք՝ աշակերտի նվաճումների դպրոցական ծրագրի զարգացման կամ դպրոցական խորհրդի հիմնադրման պահանջները խախտելու վերաբերյալ, ինչպես պահանջվում է հատկորոշված դաշնային և/կամ նահանգային կատեգորիկ ֆինանսավորման միավորված դիմումով (Կրթության օրենսգիրք 64000-64001, 65000-65001):
8. Բողոք՝ խնամակալության հանձնված աշակերտի կողմից կամ աշակերտի անունից, աշակերտի տեղավորման որոշմանը վերաբերող օրինական պահանջների, աշակերտի նկատմամբ կրթաշրջանի կապի միջնորդների պարտականությունների, այլ դպրոցում, կրթաշրջանում կամ երկրում բարեհաջող ավարտած դասընթացի համար միավորներ տալու, դպրոցը փոխելու կամ գնահատականները փոխանցելու, կամ կրթական խորհրդի կողմից պարտադիր ավարտականի պահանջներից ազատելու կանոնը խախտելու վերաբերյալ (Կրթության օրենսգիրք 48853, 48853.5, 49069.5, 51225.1, 51225.2):
9. Բողոք՝ աշակերտի կողմից կամ աշակերտի անունից, ով կրթաշրջան է տեխնիկական ավագ դպրոցի 2-րդ տարվանից հետո և անապաստան երեխա կամ դեռահաս է, ինչպես սահմանված է 42 USC 11434a-ում, անչափահասների

դատարանի դպրոցի նախկին աշակերտ է, ով ներկայումս արձանագրված է կրթաշրջանում և զինվորական ընտանիքի երեխա է, ինչպես նշված է կրթության օրենսգրքի 49701 մասում կամ գաղթական աշակերտ է, ինչպես նշված է կրթական օրենսգրքի 54441 մասում կամ նորեկների ծրագրին մասնակցող ներգաղթյալ աշակերտ է, ինչպես սահմանված է կրթության օրենսգրքի 51225.2 մասում և հանդիսանում է ավագ դպրոցի երրորդ կամ չորրորդ տարվա աշակերտ՝ կրթական խորհրդի կողմից պարտադրված ավարտականի պահանջներից ազատելու կանոնը խախտելու վերաբերյալ (Կրթության օրենսգրքի 51225.1):

10. Բողոք՝ անտուն երեխայի կամ դեռահասի կողմից կամ նրա անունից, ինչպես նշված է 42 USC 11434a-ում, անչափահասների դատարանի նախկին աշակերտի, զինվորական ընտանիքի աշակերտի կողմից, ինչպես նշված է կրթության օրենսգրքի 49701 մասում, գաղթական երեխայի կողմից, ինչպես նշված է կրթական օրենսգրքի 54441 մասում կամ նոր երկիր ժամանած ներգաղթյալ աշակերտի կողմից, ով մասնակցում է կրթության օրենսգրքի 51225.2 մասով սահմանված նորեկների ծրագրին՝ կրթաշրջանի կողմից մեկ այլ կրթաշրջանից կամ երկրից բավարար միավորների-գնահատականների փոխանցման կանոնը խախտելու վերաբերյալ (Կրթության օրենսգրքի 512252):
11. Բողոք՝ կրթության օրենսգրքի 51228.1 և 51228.2 կետերը խախտելու համար, որն արգելում է 9-12-րդ դասարանների աշակերտներին արձանագրել ուսումնական բովանդակություն չունեցող դասընթացում մեկ շաբաթից ոչ ավելի որևէ կիսամյակում կամ որևէ դասընթացի, որը աշակերտը նախկինում հաջողությամբ ավարտել է՝ առանց որոշակի պայմանների պահանջի (Կրթության օրենսգրքի 51228.3):
12. Բողոք՝ աշակերտների համար պահանջվող ֆիզիկական կրթության ուսուցման թույլտվություն չպահպանելու վերաբերյալ (Կրթության օրենսգրքի 51210, 51223):
13. Բողոքներ՝ Կալիֆոռնիա նահանգի արտոնագրից ազատված նախադպրոցական ծրագրի կողմից առողջապահության և անվտանգության չափանիշներին չհամապատասխանելու վերաբերյալ, որոնք նախատեսված են Առողջապահության և անվտանգության օրենսգրքի 1596.7925 մասով և հարակից պետական կանոնակարգերով:
14. Վրեժխնդրության վերաբերյալ բողոք՝ բողոքարկուհի, բողոքարկման գործընթացի մասնակցի կամ որևէ մեկի դեմ, ով աշխատել է բացահայտել կամ զեկուցել խախտման մասին, որը նշված է կանոնադրության մեջ:
15. Ցանկացած այլ բողոք ինչպես նշված է կրթաշրջանի կանոնադրության մեջ:

Ուսումնական խորհուրդը հասկանում է, որ կախված խնդրի բնույթից, խնդրի լուծման այլընտրանքային լուծումը (ADR) կարող է առաջարկել լուծման գործընթաց, որն ընդունելի կլինի բոլոր կողմերի համար: Կարելի է ADR գործընթացը, ինչպիսին է օրինակ

միջնորդությունը, կարելի է առաջարկել այն բողոքների դեպքում, երբ մեկից ավելի աշակերտ է ներգրավված և ոչ մի չափահաս: Միջամտություն չպետք է առաջարկվի կամ օգտագործվի սեռական բռնության դեպքում կամ այն դեպքում, երբ կողմերը իրենց ստիպված կզգան միջամտությանը մասնակցել: Գերատեսուչը կամ նրա հանձնակատարը պետք է վստահ լինի, որ արդյունքները համահունչ են նահանգային և դաշնային օրենքներին և կանոններին:

Կրթաշրջանը պետք է բողոքարկուին պաշտպանի վրեժխնդրությունից: Բողոքի հետաքննության ժամանակ, ըստ օրենքի, ներգրավված կողմերի գաղտնիությունը պետք է պաշտպանված լինի: Վրեժխնդրության կամ անօրինական խտրականության (ինչպես օրինակ խտրական ոտնձգություն, ահաբեկում կամ բռնարարք) դեմ ներկայացրած որևէ բողոքի դեպքում, եթե հարկ է, գերատեսուչը կամ նրա հանձնակատարը պետք է գաղտնի պահեն բողոքարկուի ինքնությունը և/կամ բողոքի առարկան, եթե նա բողոքարկու և է, քանի դեռ պահպանվում է բողոքի գործընթացի ամբողջականությունը:

Երբ UCP-ին չվերաբերող բողոք է ներկայացվում UCP-ին, կրթաշրջանը պետք է ոչ-UCP-ի (UCP-ին չվերաբերող) բողոքը հանձնի համապատասխան անձնակազմին կամ գործակալությանը՝ քննելու ու հնարավորության դեպքում UCP-ի հետ կապված խնդիրը լուծի կրթաշրջանի UCP-ի միջոցով:

Գերատեսուչը կամ նրա հանձնակատարը, վերապատրաստման պարապմունքների միջոցով, անձնակազմի անդամներին պետք է գինեն գիտելիքներով և իրազեկ դարձնեն գործող օրենքին և UCP-ին վերաբերող պահանջներին, այդ թվում քայլերի և ժամկետների մասին, նշված այս կանոնադրության մեջ և վարչական կանոնակարգերում:

Գերատեսուչը կամ նրա հանձնակատարը պետք է պահեն յուրաքանչյուր բողոքին և ձեռնարկված հետագա քայլերին վերաբերող գրառումները, այդ թվում հետաքննության ձեռնարկված քայլերը և օրենքի հետ համապատասխանության մասին տեղեկությունները 5CCR 4631 և 4633:

Ոչ-UCP բողոքներ

Ջետկայլ բողոքները կրթաշրջանի UCP-ին չվերաբերող բողոքներ են, որոնք պետք է հղվեն որոշակի գործակալության (5 CCR 4611):

1. Երեխայի հանդեպ չարաշահման և անտեսման վերաբերյալ բողոքները պետք է ուղղել Վարչաշրջանի սոցիալական ծառայությունների բաժանմունքին (DPSS), պաշտպանական ծառայությունների բաժանմունքին կամ համապատասխան իրավապահ գործակալությանը:
2. Երեխայի զարգացման ծրագրի առողջության և անվտանգության կանոնների խախտման մասին բողոքները պետք է հանձնել սոցիալական ծառայությունների բաժանմունքին՝ արտոնագրված կառույցների համար, և Երեխայի զարգացման տարածաշրջանային ղեկավարին՝ չարտոնագրված կառույցների համար:
3. Խարդախության վերաբերյալ բողոքը պետք է հանձնարարել Կալիֆորնիայի կրթության վարչության (California Department of Education) իրավական, վերահսկումների և համապատասխանության բաժնին:

Ցանկացած հատուկ կրթությանը վերաբերող բողոք, որը ենթադրում է անվճար համապատասխան հանրային կրթության մերժում՝ հիմնահարցի լուծման պայմանագրով պահանջվող ծառայությունների հիման վրա, նույնիսկ եթե կարգավորման պայմանագիրը չի ներառվել անհատականացված ուսումնական ծրագրի մեջ, պետք է ուսումնասիրվի Կալիֆոռնիայի կրթության վարչության կողմից:

Ցանկացած բողոքներ, որոնք կապված են երեխաների սննդի հետ, ներառյալ կերակրատեսակների հաշվարկը, հատուցվող կերակուրները և երեխաների ու չափահասների իրավասության հարցերը, պետք է ուսումնասիրվեն և պատասխանվեն ուղղակիորեն Կալիֆոռնիայի կրթության վարչության կողմից, ինչպես նշված է օրենքի 5 CCR բաժիններում՝ 15580-15584:

Ցանկացած բողոք, որը վերաբերում է աշխատանքային խտրականությանը կամ ոտնձգությանը, պետք է քննվի և կարգավորվի կրթաշրջանի կողմից՝ AR 4030 Ոչ խտրականությանը աշխատանքի վայրում օրենքում նշված ընթացակարգերի հետ համապատասխան:

Ցանկացած բողոք, որը վերաբերում է բավարար քանակությամբ դասագրքերին և ուսումնական նյութերին, հրատապ կամ շտապ օգնության պայմաններին, որոնք կարող են սպառնալ աշակերտի ու անձնակազմի առողջությանն ու անվտանգությանը, ուսուցիչների թափուր պաշտոններին և սխալ նշանակումներին, պետք է հետաքննվեն և կարգավորվի Williams-ի Բողոքի միաձև ընթացակարգերի AR 1312.4 կետի համաձայն:

Իրավական հղումներ՝

- Կրթության օրենսգրքի Մասեր – 200-262.4; 222; 8200-8498; 8500-8538; 18100-18203; 32280-32289; 33380-33384; 35186; 44500-44508; 16015; 48853-48853.5; 48985; 49010-4901; 49060-49079; 49069.5; 49490-49590; 49701; 51210; 51223; 51225.1-51225.2; 51226-51226.1; 51228.1-51228.3; 5206052077, 52075; 52160-52178; 52300-52462; 52500-52616.24;
- 54400-54425; 54440-54445; 54460-54529; 56000-56865; 5900059300; 64000-64001
- Կառավարության օրենսգրքի Մասեր – 11135; 12900-12996
- Առողջության և անվտանգության օրենսգրքի Մաս –104420
- Քրեական օրենսգիրք – 422.55; 422.6
- Կանոնակարգերի օրենսգիրք, մաս 2, հատված 11023
- Կանոնակարգերի օրենսգիրք, մաս 2, հատված 3080; 4600-4687; 4900-4965
- Միացյալ Նահանգների օրենսգիրք, մաս 20, բաժին 1221; 1232g; 1681-1688; 6301-6576; 6801-7014; 7101-7184; 7201-7283g; 7301-7372; 12101-12213

Գլենդելի հանրային դպրոցների կրթաշրջան
Ուսումնական խորհրդի քաղաքականություն

BP 1312.3
6-ը 6-ից

Միացյալ Նահանգների օրենսգիրք, մաս 29, բաժին 794
Միացյալ Նահանգների օրենսգիրք, մաս 42, բաժին 2000d-
2000e-17; 2000h-2-2000h-6; 6101-6107

Դաշնային կանոնակարգերի օրենսգիրք, բաժին 28, մաս
35.107

Դաշնային կանոնակարգերի օրենսգիրք, մաս 34, մասեր 99.1-
99.67; 100.3; 104.7; 106.8; 106.9; 110.25

Կանոնադրությունն ընդունվել է՝ 11/17/1992

Կանոնադրությունը բարեփոխվել է՝ 12/17/2002; 11/03/2010; 03/11/2014; 04/15/2014;
05/06/2014; 04/05/2016; 10/18/2016; 08/15/2017;
02/06/2018; 05/01/2018; 06/04/2019

(Նախկինում՝ BP 1312)

Համայնքային հարաբերություններ

Բողոքի համընդհանուր ընթացակարգեր

Եթե Ուսումնական խորհուրդը կրթաշրջանի այլ առանձնահատուկ կանոններ չներկայացնի, ապա Բողոքի համընդհանուր այս ընթացակարգերը (UCP) պետք է օգտագործվեն BP 1312.3-ում նշված բողոքները քննելու և լուծելու համար:

Պատասխանատու պաշտոնյաներ

Կրթաշրջանն անհատ(ներ), պաշտոն(ներ) կամ բաժանմունք(ներ) է ընտրում, որոնք պատասխանատու են ներկայացված բողոքներին անդրադառնալու համար՝ հետևելով նահանգային և դաշնային քաղաքացիական իրավունքների մասին օրենքներին: Այդ անհատ(ներ)ը, պաշտոն(ներ)ը կամ բաժանմունք(ներ)ը ծառայում են որպես պատասխանատու պաշտոնյաներ անօրինական խտրականությունները (ինչպես օրինակ խտրական ոտնձգություն, ահաբեկում կամ բռնարարքներ) հարթելու համար, ինչպես նշված է AR 5145.3-ի «ոչ խտրականություն/ոտնձգություն» բաժնում: Պատասխանատու պաշտոնյաները կստանան և կհամադրեն հետաքննության արդյունքներն օրենքին համահունչ:

Dr. Kelly King՝ գերատեսուչի օգնական, Կրթական ծառայություններ
223 North Jackson Street
Glendale, CA 91206
(818) 241-3111, Ext. 1208
kking@gusd.net

Dr. Lena Richter՝ Կատեգորիկ ծրագրերի ղեկավար
223 North Jackson Street
Glendale, CA 91206
(818) 241-3111, Ext. 1457
lrichter@gusd.net

Պատասխանատու պաշտոնյան, ով ստանում է բողոքը, կարող է այդ բողոքի հետաքննությունը և լուծումը հանձնարարել մի այլ պատասխանատու պաշտոնյայի: Եթե մի այլ պատասխանատու պաշտոնյա է նշանակվել բողոքը հետաքննելու համար, սկզբնական պատասխանատու պաշտոնյան պետք է ժամանակին տեղեկացնի բողոքարկուին և մեղադրյալին, եթե հարկն է:

Ոչ մի դեպքում, չպետք է նշանակել մի պատասխանատու պաշտոնյայի, ով կողմնակալություն կամ շահերի բախում ունի, որը թույլ չի տա պատասխանատու պաշտոնյային անկողմնակալ կերպով հետաքննություն կատարել և լուծել խնդիրը: Պատասխանատու պաշտոնյայի դեմ բողոքը կամ պատասխանատու պաշտոնյայի արդարացի հետաքննությունը կատարելու և խնդիրը լուծելու ունակության վերաբերյալ մտահոգությունները պետք է ներկայացնել գերատեսուչին կամ նրա հանձնակատարին, ով կորոշի, թե ինչպես պետք է հետաքննվի բողոքը:

Համայնքային հարաբերություններ

Բողոքի համընդհանուր ընթացակարգեր

Գերատեսուչը կամ նրա հանձնակատարը պետք է համոզված լինեն, որ պատասխատանու պաշտոնյան, ում հանձնարարվել է բողոքի քննումն ու լուծումը, վերապատրաստվել է և գիտի օրենքի և բողոքում նշված խնդրի մասին: Այս աշխատակիցներին տրամադրվող վերապատրաստման աշխատանքները պետք է անդրադառնան նահանգային և դաշնային օրենքներին և կանոններին, ծրագրի ղեկավարման կանոններին, բողոքի հետաքննման և լուծման համար կիրառելի ընթացակարգին, ներառյալ ենթադրյալ անօրինական խտրականությունը (ինչպես օրինակ խտրական ոտնձգություն, ահաբեկում կամ բռնարարքներ), բողոքների վերաբերյալ որոշումներ կայացնելու կիրառելի չափանիշներ և համապատասխան ուղղիչ միջոցներ: Նշանակված աշխատակիցը կարող է կապվել իրավախորհրդատուի հետ, ինչպես սահմանված է գերատեսուչի կամ նրա հանձնակատարի կողմից:

Պատասխանատու պաշտոնյան կամ, եթե կարիք լինի, որևէ վարչական ղեկավար պետք է որոշեն, թե արդյոք հետաքննության և պատասխանին սպասելու ընթացքում անհրաժեշտ են միջանկյալ միջոցառումներ: Եթե որոշվի, որ անհրաժեշտ են միջանկյալ միջոցառումներ, պատասխանատու պաշտոնյան կամ վարչական ղեկավարը պետք է խորհրդակցեն գերատեսուչի, նրա հանձնակատարի կամ եթե հարկն է, դպրոցի տնօրենի հետ, մեկ կամ ավել միջանկյալ միջոցառումներ կիրառելու համար: Միջանկյալ միջոցները պետք է ուժի մեջ լինեն մինչև պատասխանատու պաշտոնյան կորոշի, որ դրանք այլևս անհրաժեշտ չեն կամ մինչև կրթաշրջանը կհայտնի իր գրավոր վերջնական որոշումը, որը որ ավելի շուտ կլինի:

Ծանուցումներ

Կրթաշրջանի UCP-ի կանոնները և վարչական կանոնակարգերը պետք է փակցնել կրթաշրջանի բոլոր դպրոցներում և գրասենյակներում, ներառյալ հանգստի սենյակները և աշակերտական խորհրդի ժողովների սենյակը (Կրթության օրենսգիրք 234.1)

Բացի այդ, ամեն տարի գերատեսուչը կամ նրա տեղակալը պետք է տրամադրեն կրթաշրջանի UCP-ի ծանուցումներն աշակերտներին, աշխատողներին, կրթաշրջանի աշակերտների ծնողներին/խնամակալներին, կրթաշրջանի և դպրոցների խորհրդատվական հանձնաժողովների անդամներին, համապատասխան մասնավոր դպրոցի պաշտոնատար անձանց կամ ներկայացուցիչներին և այլ շահագրգիռ կողմերին (5 CCR 4622):

Ծանուցումը պետք է ներառի՝

1. Հայտարարություն, որ կրթաշրջանը հիմնականում պատասխանատու է դաշնային և նահանգային օրենքներին և կանոնակարգություններին հետևելու համար, ներառյալ անօրինական խտրականության, ահաբեկման, վախեցնելու կամ որևէ պաշտպանված խմբի և բոլոր ծրագրերի ու գործողությունների հանդեպ ահաբեկումն արգելելուն, որոնք ենթակա են UCP-ի, ինչպես նշված է խորհրդի «UCP-ին ներկայացվող բողոքներ» բաժնում:

Համայնքային հարաբերություններ

Բողոքի համընդհանուր ընթացակարգեր

2. Հայտարարություն, որ աշակերտի վճարների կամ տեղական կառավարման և պատասխանատվության ծրագրի վերաբերյալ բողոքը կարող է ներկայացվել անանուն, եթե բողոքարկուն տրամադրում է բողոքը պաշտպանող ապացույցներ կամ տեղեկություններ:
3. Հայտարարություն, որ հանրային դպրոցում արձանագրված աշակերտը չպետք է գումար վճարի ուսումնական ծրագրին մասնակցելու համար, որը կրթաշրջանի կրթական ծրագրի հիմնական մասն է համարվում, ներառյալ ուսումնական և արտաժամյա ծրագրերը:
4. Հայտարարություն, որ աշակերտի վճարների մասին բողոքը պետք է ներկայացվի ոչ ուշ, քան մեկ տարվա ընթացքում ենթադրյալ խախտման օրվանից:
5. Հայտարարություն, որ կրթաշրջանը կփակցնի ինսամբի տակ գտվող դեռահասների, անտուն աշակերտների և կրթաշրջանում արձանագրված դեռահասների դատարանի դպրոցի աշակերտների, զինվորական ընտանիքների երեխաների, գաղթական աշակերտների և նորեկների ծրագրում արձանագրված գաղթական աշակերտների կրթական իրավունքների վերաբերյալ միօրինականացված ծանուցումը, ինչպես նշված է Կրթության օրենսգրքի 48853, 48853.5, 49069.5, 51225.1 և 51225.2 մասերում և բողոքի գործընթացում:
6. Պատասխանատու անձի(անց), պաշտոն(ներ)ի կամ բաժին(ներ)ի վերաբերյալ տեղեկությունները, ովքեր ի պաշտոնե պետք է ստանան բողոքները:
7. Հայտարարություն, որ բողոքները կհետաքննվեն կրթաշրջանի UCP-ի դրույթներին համապատասխան, և գրավոր որոշումը կուղարկվի բողոքարկունին բողոքը ստանալուց 60 օրվա ընթացքում, եթե այս ժամանակահատվածը չի երկարացվել բողոքարկուի կողմից ներկայացված գրավոր համաձայնությամբ:
8. Հայտարարություն, որ բողոքողն իրավունք ունի բողոքարկել կրթաշրջանի որոշումը Կալիֆորնիայի կրթության վարչությունում՝ ներկայացնելով գրավոր բողոքարկում, դրան կցելով բողոքի բնօրինակի և կրթաշրջանի որոշման պատճենը, կրթաշրջանի որոշումը ստանալուց 60 օրվա ընթացքում:
9. Հայտարարություն, որը տեղեկացնում է բողոքարկունին քաղաքացիական իրավական պաշտպանության միջոցների մասին, որը ներառում, բայց չի սահմանափակում դատական որոշումները, դատարանի կողմից նշանակված արգելքները կամ այլ իրավական պաշտպանության որոշումներ կամ հրամաններ, որ առկա են նահանգային կամ դաշնային հակախտրականության օրենքներով:
10. Հայտարարություն, որ կրթաշրջանի UCP-ի պատճենները պետք է հասանելի լինեն անվճար:

Համայնքային հարաբերություններ

Բողոքի համընդհանուր ընթացակարգեր

Տարեկան ծանուցումները, պատասխանատու պաշտոնյաների հետ կապվելու ամբողջական տեղեկությունը և Title IX-ի վերաբերյալ տեղեկությունները, Կրթության օրենսգրքի 221.61 Մասի համաձայն, պետք է տեղադրել կրթաշրջանի կայքէջում և կարելի է տրամադրել կրթաշրջանի հաստատած սոցիալական լրատվամիջոցների միջոցով, եթե առկա են:

Գերատեսուչը կամ նրա տեղակալը պետք է վստահանան, որ բոլոր աշակերտները և ծնողները/խնամակալները, ներառյալ անգլերենի սահմանափակ իմացությամբ աշակերտները և ծնողները/խնամակալները կարող են կրթաշրջանի կանոնների, ձևերի և UCP-ի ծանուցումների վերաբերյալ տեղեկություններ ստանալ:

Եթե կրթաշրջանի աշակերտության 15 տոկոսը կամ ավելին խոսում են մի այլ լեզվով, համաձայն Կրթության օրենսգրքի 234.1 և 48985 ի կրթաշրջանի կանոնները, դիմումի ձևերը և UCP-ի ծանուցումները պետք է թարգմանվեն այդ լեզուներով: Բոլոր դեպքերում, կրթաշրջանը պետք է վստահանա, որ անգլերենի սահմանափակ իմացությամբ ծնողները/խնամակալները կարող են UCP-ի վերաբերյալ տեղեկություններ ունենալ:

Բողոք ներկայացնել

Բողոքը պետք է ներկայացնել պատասխանատու պաշտոնյային, ով պետք է ստացված բողոքների ցանկը պահի, յուրաքանչյուր բողոք կողմի և թվագրի:

Բոլոր բողոքները պետք է գրավոր ներկայացնել և բողոքարկուն պետք է ստորագրի այն: Եթե բողոքարկուն չի կարող իր բողոքը գրավոր ներկայացնել, օրինակ՝ հաշմանդամության կամ անգրագիտության պատճառով, կրթաշրջանի աշխատակիցները պետք է օգնեն նրան ներկայացնել բողոքը (5 CCR 4600):

Բողոքները պետք է ներկայացնել հետևյալ կանոնների համաձայն, ըստ կիրառելիության:

1. Ցանկացած բողոք, որ ենթադրում է կիրառելի նահանգային կամ դաշնային օրենքի կամ կանոնների խախտում կրթաշրջանի կողմից, որ ղեկավարում է Ուսումնական խորհրդում նշված ծրագրերը («UCP-ին ենթակա բողոքները» բաժնի 1-ին կետը), կարող է ներկայացվել ցանկացած անհատի, հանրային կառույցի կամ կազմակերպության կողմից (5 CCR 4630):
2. Ուսումնական աշխատանքներին մասնակցելու համար աշակերտներից վճարում, կանխավճար և այլ տեսակի գանձումներ կատարելու կանոնը խախտելու կամ LCAP-ի հետ կապված որևէ պահանջի վերաբերյալ բողոքը կարող է ներկայացվել անանուն, եթե բողոքարկուն փաստեր է ներկայացնում կամ տեղեկություններ, որոնք հանգեցնում են փաստերի բացահայտմանը: Կրթական աշխատանքներին մասնակցելու համար աշակերտներից անօրինական գանձումներ կատարելու մեղադրանքը կարելի է ներկայացնել դպրոցի տնօրենին կամ գերատեսուչին կամ նրա տեղակալին: Այնուամենայնիվ, այսպիսի որևէ բողոք պետք է ներկայացնել խախտումը կատարելու օրվանից մեկ տարվա ընթացքում (Կրթության օրենսգրքի 49013, 52075; 5 CCR 4630):

Համայնքային հարաբերություններ

Բողոքի համընդհանուր ընթացակարգեր

3. Անօրինական խտրականության (ինչպես օրինակ խտրական ոտնձգություն, ահաբեկում կամ բռնարարք) բողոքը կարող են ներկայացնել միայն այն անհատները, ովքեր ենթարկվել են անօրինական խտրականության կամ ովքեր հավատացած են, որ որևէ անհատ կամ խումբ ենթարկվել է անօրինական խտրականության: Բողոքը պետք է ներկայացնել անօրինական խտրականության պատահարից հետո վեց ամսվա ընթացքում կամ անօրինական խտրականության մասին իմանալուց հետո վեց ամսվա ընթացքում: Բողոքը ներկայացնելու ժամկետը կարելի է երկարացնել մինչև 90 օր գրավոր դիմում ներկայացնելով գերատեսուչին կամ նրա տեղակալին՝ բացատրելով պատճառը (5 CCR 4630):
4. Երբ անօրինական խտրականության (ինչպես օրինակ խտրական ոտնձգություն, ահաբեկում կամ բռնարարք) բողոքն անանուն է ներկայացվում, պատասխանատու պաշտոնյան պետք է հետաքննություն կատարի կամ այլ կերպով պատասխանի ըստ պատշաճության, կախված տեղեկության առանձնահատկությունից և վստահելիությունից և մեղադրանքի լրջությունից:
5. Երբ անօրինական խտրականության (ինչպես օրինակ խտրական ոտնձգություն, ահաբեկում կամ բռնարարք) բողոքարկուն կամ ենթադրյալ զոհը բողոքարկուն չէ և գաղտնապահություն է պահանջում, պատասխանատու պաշտոնյան պետք է բողոքարկուն կամ տուժողին տեղեկացնի, որ այդ պահանջը կարող է սահմանափակել կրթաշրջանի հետաքննություն կատարելու կամ անհրաժեշտ միջոցներ ձեռնարկելու կարողությունը: Գաղտնապահության պահանջը հարգելով՝ կրթաշրջանը, այնուամենայնիվ, ողջամիտ քայլեր է կատարում բողոքը հետաքննելու և լուծելու համար՝ համաձայն պահանջի:

Միջնորդություն

Բողոքը ստանալուց հետո երեք աշխատանքային օրվա ընթացքում, պատասխանատու պաշտոնյան կողմերի հետ ոչ պաշտոնապես կքննարկի միջնորդություն օգտագործելու հավանականությունը: Միջնորդություն կարող է առաջարկվել այն բողոքների դեպքում, երբ մեկից ավելի աշակերտ է ներգրավված և ոչ մի չափահաս: Այնուամենայնիվ, միջնորդություն չպետք է առաջարկվի կամ օգտագործվի սեռական բռնության դեպքում կամ այն դեպքում, երբ կողմերը իրենց ստիպված կզգան միջնորդությանը մասնակցել: Եթե կողմերը համաձայն լինեն միջնորդության հետ, պատասխանատու պաշտոնյան պետք է կատարի բոլոր նախապատրաստություններն այս գործընթացի համար:

Նախքան վրեժխնդրության կամ անօրինական խտրականության (ինչպես օրինակ խտրական ոտնձգություն, ահաբեկում կամ բռնարարք) բողոքի լուծման համար միջնորդության նախաձեռնումը պատասխանատու պաշտոնյան պետք է վստահանա, որ բոլոր կողմերը համաձայն են, որ միջնորդը տեղեկանա գաղտնի տեղեկություններին: Պատասխանատու պաշտոնյան պետք է կողմերին հայտնի, որ նրանք իրավունք ունեն ոչ պաշտոնական գործընթացը դադարեցնել ցանկացած ժամանակ:

Համայնքային հարաբերություններ

Բողոքի համընդհանուր ընթացակարգեր

Եթե օրենքի սահմաններում, միջնորդության միջոցով խնդիրը չլուծվի, պատասխանատու պաշտոնյան պետք է շարունակի հետաքննությունը:

Միջնորդության գործընթացը չպետք է երկարացնի կրթաշրջանի բողոքը հետաքննելու և լուծելու համար սահմանած ժամկետը, բացառությամբ, եթե բողոքարկուն գրավոր համաձայնել է ժամկետը երկարացնելու հետ: Եթե միջնորդությունը հաջող ավարտվի, բողոքը հանվում է և կրթաշրջանը կկատարի միայն միջնորդության միջոցով համաձայնեցված գործողությունները: Եթե միջնորդությունը անարդյունք լինի, կրթաշրջանը պետք է շարունակի վարչական կանոնակարգով սահմանված քայլերը:

Բողոքի հետաքննում

Բողոքը ստանալուց հետո մինչև 10 աշխատանքային օրվա ընթացքում, պատասխանատու պաշտոնյան պետք է սկսի հետաքննություն կատարել:

Հետաքննությունը նախաձեռնելուց հետո, մեկ աշխատանքային օրվա ընթացքում, պատասխանատու պաշտոնյան պետք է բողոքարկուին կամ բողոքարկուի ներկայացուցչին հնարավորություն տա ներկայացնելու բողոքում ներառված տեղեկությունները և պետք է բողոքարկուին կամ նրա ներկայացուցչին տեղեկացնի բողոքին նպաստող ապացույցներ կամ ապացույցներին հանգեցնող տեղեկություններ ներկայացնելու հնարավորության մասին: Այսպիսի ապացույցներ կամ տեղեկություններ կարելի է ներկայացնել հետաքննության ամբողջ ընթացքում:

Հետաքննություն կատարելիս՝ պատասխանատու պաշտոնյան պետք է հավաքի բոլոր փաստաթղթերը և վերանայի բոլոր մատչելի արձանագրությունները, գրառումները կամ բողոքին վերաբերող հայտարարությունները, ներառյալ հետաքննության ընթացքում, կողմերից ստացած որևէ լրացուցիչ ապացույց կամ տեղեկություն: Պատասխանատու պաշտոնյան պետք է առանձին հարցազրույց անցկացնի բոլոր վկաների հետ, ովքեր բողոքի հետ կապված տեղեկություններ ունեն և կարող են այցելել այն վայրերը, որտեղ տեղի են ունեցել գործողությունները: Պատասխանատու պաշտոնյան համապատասխան պարբերականությամբ պետք է երկու կողմերին տեղեկացնի հետաքննության ընթացքի մասին:

Վրեժխնդրության կամ անօրինական խտրականության (ինչպես օրինակ խտրական ոտնձգություն, ահաբեկում կամ բռնարարք) բողոք հետաքննելիս՝ պատասխանատու պաշտոնյան պետք է առանձին և զաղտնի հարցաքննի ենթադրյալ զոհին, ենթադրյալ հանցագործին և վկաներին: Ըստ անհրաժեշտության, անձնակազմի այլ անդամները կամ իրավաբանները կարող են վարել կամ նպաստել հետաքննությանը:

Եթե բողոքարկուն հրաժարվի կրթաշրջանի հետաքննողին մեղադրանքին վերաբերող փաստաթղթեր կամ այլ ապացույցներ ներկայացնել, չհամագործակցել կամ խոչընդոտել, բողոքը կփակվի ապացույցների բացակայության պատճառով: **Նմանապես, եթե մեղադրյալը** հրաժարվի կրթաշրջանի հետաքննողին մեղադրանքին վերաբերող փաստաթղթեր կամ այլ ապացույցներ ներկայացնել, չհամագործակցի կամ խոչընդոտի հետաքննության աշխատանքները, ապա հավաքած ապացույցների հիման վրա որոշում կկայացվի, որ

Համայնքային հարաբերություններ

Բողոքի համընդհանուր ընթացակարգեր

Խախտումը տեղի է ունեցել և միջոցներ կկիրառվեն հոգուտ բողոքարկուհի (5 CCR 4631):

Ըստ օրենքի, կրթաշրջանը պետք է մեղադրանքին վերաբերող բոլոր արձանագրությունները և այլ տեղեկությունները մատչելի դարձնի հետաքննողին և չպետք է խոչընդոտի հետաքննության աշխատանքներին: Կրթաշրջանի համագործակցությունից հրաժարվելը կհանգեցնի հավաքած ապացույցների հիման վրա, ըստ որոնց խախտումը տեղի է ունեցել, դատավճիռ կայացնելուն, և միջոցներ կկիրառվեն հոգուտ բողոքարկուհի (5 CCR 4621):

Վերջնական որոշման ժամանակահատված

Վերջնական որոշումը պետք է բողոքարկուհին ուղարկվի բողոքը ստանալուց հետո, 60 օրվա ընթացքում, բացառությամբ, եթե ժամկետը երկարացվել է գրավոր համաձայնությամբ: Բողոքը ստանալուց հետո, 30 օրվա ընթացքում, պատասխանատու պաշտոնյան պետք է գրավոր զեկույց պատրաստի և բողոքարկուհին ուղարկի, ինչպես նկարագրված է «Վերջնական գրավոր որոշման» մեջ: Եթե բողոքարկուն դժգոհ է պատասխանատու պաշտոնյայի որոշումից, նա կարող է հինգ աշխատանքային օրվա ընթացքում բողոք ներկայացնել Ուսումնական խորհրդին:

Ուսումնական խորհուրդը կարող է խնդիրը քննարկել ուսումնական խորհրդի հաջորդ ժողովին կամ արտակարգ ժողով գումարել, 60 օրվա ժամկետը պահպանելու համար: Երբ օրենքով պահանջվում է, խնդիրը պետք է փակ դեմքի հետևում քննարկվի: Ուսումնական խորհուրդը կարող է բողոքարկուհին չլսելու որոշում կայացնել, որի դեպքում պատասխանատու պաշտոնյայի որոշումը վերջնական կլինի:

Եթե ուսումնական խորհուրդը լսի բողոքը, պատասխանատու պաշտոնյան պետք է բողոքը ստանալուց հետո՝ 60 օրվա ընթացքում, կամ գրավոր համաձայնագրում նշված ժամկետում, ուսումնական խորհրդի որոշումը ուղարկի բողոքարկուհին (5 CCR 4631):

Անօրինական խտրականության (ինչպես օրինակ խտրական ոտնձգություն, ահաբեկում կամ բռնարարք) որևէ բողոքի պարագայում, մեղադրյալը պետք է տեղեկացվի բողոքարկուհի հետ համաձայնության եկած երկարաձգված ժամանակահատվածի վերաբերյալ, նրան պետք է ուղարկվի կրթաշրջանի վերջնական գրավոր որոշումը: Մեղադրյալը, կայացված որոշումից դժգոհ լինելու դեպքում, կարող է բողոք ներկայացնել Ուսումնական խորհրդին այնպես, ինչպես բողոքարկուն:

Վերջնական գրավոր որոշում

Բոլոր բողոքների համար, կրթաշրջանի գրավոր որոշումը պետք է ներառի՝ (5 CCR 4631)

1. Եզրակացություն՝ հիմնված է հավաքած փաստերի վրա: Փաստացի որոշման հանգեյուլ համար, պետք է հաշվի առնել հետևյալ գործոնները՝
 - ա. Վկաների տված ցուցմունքները
 - բ. Ներգրավված անհատների հարաբերական վստահելիությունը

Համայնքային հարաբերություններ

Բողոքի համընդհանուր ընթացակարգեր

- գ. Ինչպես է բողոքարկու անհատն արձագանքել միջադեպին
 - դ. Ենթադրյալ վարքագծի հետ կապված որևէ փաստ կամ այլ ապացույց
 - ե. Ենթադրյալ մեղադրյալի կողմից անցյալում ցուցաբերած նման վարքագիծ
 - զ. Բողոքարկուի կողմից անցյալում ներկայացրած կեղծ մեղադրանքներ
2. Օրենքի եզրակացություն(ներ)
 3. Բողոքի տրամադրում
 4. Բողոքի տրամադրման բացատրություն
Վրեժխնդրության կամ անօրինական խտրականության (ինչպես օրինակ խտրական ոտնձգություն, ահաբեկում կամ բռնարարք) բողոքի պարագայում բողոքի տրամադրումը պետք է ներառի յուրաքանչյուր մեղադրանքի համար մի որոշում՝ թե արդյոք վրեժխնդրություն կամ անօրինական խտրականություն տեղի է ունեցել: Թշնամական միջավայրի գոյություն ունենալու որոշումը կարող է ներառել հետևյալները.
 - ա. Ինչպես է վատ վարքագիծն ազդել մեկ կամ ավելի աշակերտների կրթության վրա
 - բ. Վատ վարքի տեսակը, հաճախականությունը և տևողությունը
 - գ. Ենթադրյալ զոհի և մեղադրյալի հարբերությունը
 - դ. Ցուցաբերած վարքի մեջ ներառված անհատների թիվը, և թե ում դեմ էր ուղղված այդ վարքը
 - ե. Դպրոցի չափսը, միջադեպի վայրը և հանգամանքները
 - զ. Դպրոցում պատահած այլ միջադեպեր տարբեր անձանց մասնակցությամբ
 5. Ուղղիչ գործողություն(ներ), ներառյալ կատարված կամ կատարվելիք որևէ գործողություն բողոքի մեջ ներառված մեղադրանքին անդրադառնալու համար, ներառյալ աշակերտի վճարումների վերաբերյալ բողոքներին, մի միջոց, որը համապատասխանում է կրթության օրենսգրքին: Ուղղիչ գործողություններ(ներ), ներառյալ այն գործողությունները, որոնք ձեռնարկվել են կամ ձեռնարկվելու են

Համայնքային հարաբերություններ

Բողոքի համընդհանուր ընթացակարգեր

բողոքում առաջադրված մեղադրանքները լուծելու համար, ներառյալ՝ աշակերտների վարձատրության վերաբերյալ բողոքին վերաբերող միջոցառումներ, որոնք համապատասխանում են Կրթության օրենսգրքի 49013 բաժնին և 5 CCR 4600 կետին:

Անօրինական խտրականության (ինչպես օրինակ խտրական ոտնձգություն, ահաբեկում կամ բռնարարք) բողոքի համար, ծանուցումը, ըստ օրենքի, կարող է պարունակել՝

- ա. Պատասխանողի նկատմամբ կիրառված ուղղիչ գործողությունները:
- բ. Բողոքարկուին կամ բողոքարկման առարկա հանդիսացող անհատին առաջարկված կամ տրամադրված անհատական միջոցառումներ, բայց այս տեղեկությունները չպետք է հայտնել մեղադրյալին:
- գ. Համակարգված միջոցներ, որ դպրոցը ձեռնարկել է թշնամական միջավայրը վերացնելու և կանխելու համար:

6. Կրթաշրջանի որոշումը բողոքարկելու և 15 օրվա ընթացքում CDE-ին դիմելու նրա իրավունքի և ընթացակարգի վերաբերյալ ծանուցումը պետք է ուղարկվի բողոքարկուին և մեղադրյալին :

Որոշումը կարող է ներառել հետագայում կիրառվող ընթացակարգը՝ միջադեպը կամ վրեժխնդրությունը կանխելու և հետագա խնդիրները զեկուցելու համար: Կրթաշրջանի փաստաբանի հետ խորհրդակցելով՝ որոշման համապատասխան մասի վերաբերյալ տեղեկությունը պետք է հաղորդվի տուժող կողմին, ով բողոքարկուն չէ, և մյուս կողմերին, ովքեր կարող են ներգրավված լինել որոշման կայացման մեջ կամ տուժած լինեն բողոքից, եթե կողմերի գաղտնիությունը պահպանվում է: Անօրինական խտրականության բողոքը (ինչպես օրինակ խտրական ոտնձգություն, ահաբեկում կամ բռնարարք), տուժողին ներկայացվող կրթաշրջանի որոշման ծանուցումը պետք է ներառի տեղեկություններ մեղադրվողի հանդեպ կիրառվող ցանկացած պատժամիջոցի մասին, որն ուղղակիորեն վերաբերում է տուժողին:

Եթե բողոքը առնչվում է սահմանափակ անզլերենի իմացությամբ աշակերտին կամ ծնողին/խնամակալին և ներգրավված աշակերտը արձանագրված է այնպիսի դպրոցում, որտեղ աշակերտների 15 տոկոսը կամ ավելին աշակերտներ են, ում մայրենի լեզուն անզլերենը չէ, ապա որոշումը պետք է նաև թարգմանվի նրանց համար հասկանալի լեզվով՝ կրթության օրենսգրքի 48985 մասի համաձայն: Մնացած բոլոր պարագաներում կրթաշրջանը սահմանափակ անզլերենի իմացությամբ ծնողներին/խնամակալներին հնարավորություն կտա հասու լինել կարևոր բոլոր տեղեկություններին:

Համայնքային հարաբերություններ

Բողոքի համընդհանուր ընթացակարգեր

Ըստ օրենքի, անօրինական խտրականության (ինչպես օրինակ խտրական ոտնձգություն, ահաբեկում կամ բռնարարք) բողոքի համար, որոշումը պետք է ներառի բողոքարկուին ուղղված ծանուցում, որ.

- ա. Բողոքարկուն կարող է դիմել քաղաքացիական դատարան, կրթաշրջանի բողոքարկման ընթացակարգից դուրս, ներառյալ միջամտության կենտրոնից կամ հանրային/մասնավոր փաստաբանի օգնության դիմել, CDE-ին բողոք ներկայացնելուց 60 օրվա ընթացքում (Կրթության օրենսգիրք 262.3):
- բ. 60 օրվա ժամկետը չի վերաբերում այն բողոքներին, որ դատական օգնություն են փնտրում նահանգային դատարանում կամ խտրականության բողոքարկումներ, ըստ դաշնային օրենքի (Կրթության օրենսգիրք 262.3):
- գ. Ռասայի, գույնի, ազգային ծագման, սեռի, անկարողության կամ տարիքի հետ կապված բողոքները նույնպես կարելի է ներկայացնել ԱՄՆ-ի կրթության վարչության քաղաքացիական իրավունքների գրասենյակին՝ www.ed.gov/ocr կայք այցելելով, ենթադրյալ խտրականության միջադեպից 180 օրվա ընթացքում:

Ուղղիչ գործողություններ

Երբ պարզվի, որ բողոքը հիմք ունի, պատասխանատու պաշտոնյան պետք է օրենքով թույլատրված համապատասխան ուղղիչ գործողություններ ձեռնարկի: Համապատասխան ուղղիչ գործողությունները կարող են կենտրոնանալ ընդհանուր դպրոցի կամ կրթաշրջանի կանոնների ամրապնդման, աշխատակիցների, անձնակազմի և աշակերտների վերապատրաստման, դպրոցի կանոնների արդիականացման կամ դպրոցի մթնոլորտի ուսումնասիրության վրա:

Վրեժխնդրության կամ անօրինական խտրականության (ինչպես օրինակ խտրական ոտնձգություն, ահաբեկում կամ բռնարարք), բողոքի համար համապատասխան միջոցներ, որոնք կարող են առաջարկվել զոհին, բայց չհաղորդվել մեղադրյալին, կարող են ներառել, բայց չսահմանափակվել, հետևյալները՝

1. Խորհրդատվություն
2. Ուսումնական աջակցություն
3. Առողջապահական ծառայություններ

Համայնքային հարաբերություններ

Բողոքի համընդհանուր ընթացակարգեր

4. Ուղեկցորդի տրամադրում, որպեսզի զոհը կարողանա ապահով շրջել դպրոցում
5. Տեղեկություն մատչելի միջոցների մասին և ինչպես գեկուցել նմանատիպ միջադեպերը կամ վրեժխնդրությունը
6. Չոհին առանձնացնել միջադեպի մեջ ներգրավված անձանցից, բայց ոչ պատժի տեսքով
7. Վերականգնողական արդարադատություն
8. Հետևել վստահանալու, որ վարքագծի դրսևորումը դադարել է և վրեժխնդրության դեպքեր չեն եղել:

Վրեժխնդրության կամ անօրինական խտրականության (ինչպես օրինակ խտրական ոտնձգություն, ահաբեկում կամ բռնարարք) բողոքի համար, համապատասխան ուղղիչ գործողությունները, որոնք կենտրոնանում են օրինազանց աշակերտի վրա, կարող են ներառել, բայց չսահմանափակել հետևյալները`

1. Մի այլ դասարան կամ դպրոց փոխադրել` համաձայն օրենքի
2. Ծնողի/խնամակալի հետ ժողով
3. Կրթություն այն մասին, թե վարքագիծը ինչպես է ազդում մյուսների վրա
4. Դրական վարքի օժանդակություն
5. Հանձնարարական աշակերտի հաջողություններն ուսումնասիրող հանձնախմբին (SST)
6. Չրկել արտադպրոցական կամ արտադասարանական աշխատանքներից` համաձայն օրենքի
7. Պատժամիջոցներ, ինչպես օրինակ` կասեցում դպրոցից կամ հեռացում` համաձայն օրենքի

Երբ պարզվի, որ աշխատակիցը վրեժխնդրություն կամ անօրինական խտրականություն (ինչպես օրինակ խտրական ոտնձգություն, ահաբեկում կամ բռնարարք) է կատարել, կրթաշրջանը պետք է պատժամիջոցներ ձեռք առնի, ընդհուպ մինչև աշխատանքից

Համայնքային հարաբերություններ

Բողոքի համընդհանուր ընթացակարգեր

ազատում, համաձայն գործող օրենքի և կոլեկտիվ բանակցությունների պայմանագրի:

Կրթաշրջանը կարող է վերապատրաստում և այլ միջամտություններ տրամադրել ամբողջ դպրոցի համայնքին, որպեսզի վստահ լինի, որ աշակերտները, անձնակազմը և ծնողները/խնամակալները հասկանում են, թե որ վարքագիծն է անօրինական խտրականություն (ինչպես օրինակ խտրական ոտնձգություն, ահաբեկում կամ բռնարարք) համարվում, որ կրթաշրջանը դա չի հանդուրժում և ինչպես զեկուցել ու արձագանքել դրան:

Երբ բողոքն իրենից կարևորություն է ներկայացնում, բողոքողին կամ վնաս կրած այլ անձին համապատասխան միջոցներ են տրամադրվում:

Եթե բողոքը, որը ենթադրում է անհամապատասխանություն աշակերտների վճարների, կանխավճարների և այլ ծախսերի, մարմնամարզության դասի թոպենների և LCAP-ի որևէ պահանջի վերաբերյալ օրենքների հետ, հիմք ունենա, ապա կրթաշրջանը պետք է միջոցներ տրամադրի բոլոր տուժված աշակերտներին և ծնողներին/խնամակալներին՝ համաձայն նահանգային Ուսումնական խորհրդի կանոնակարգի ընթացակարգերի (Կրթության օրենսգիրք 49013, 51223, 52075):

Բողոքները, որոնք ենթադրում են անհամապատասխանություն աշակերտների վճարների օրենքներին, կրթաշրջանը պետք է բարեխղճորեն, ողջամիտ ջանքերի շնորհիվ հայտնաբերի և ամբողջությամբ վերադարձնի ողջ վնասն աշակերտներին և ծնողներին/խնամակալներին, ովքեր վճարել են անօրինական գանձումներ, բողոքը ներկայացնելուց հետո մեկ տարվա ընթացքում (Կրթության օրենսգիրք 49013; 5 CCR 4600):

Բողոքարկումներ Կալիֆոռնիայի կրթության վարչությանը

UCP-ի ենթակա որևէ կոնկրետ դաշնային կամ նահանգային ծրագրի բողոքի վերաբերյալ կրթաշրջանի վերջնական գրավոր որոշումից դժգոհ որևէ բողոքարկու կարող է գրավոր բողոքարկել կրթաշրջանի որոշումը CDE-ին՝ որոշումը ստանալուց հետո 15 օրվա ընթացքում (5 CCR 4632):

Բողոքարկուն պետք է նշի որոշման դեմ բողոքարկելու հիմքը և թե ինչպես են կրթաշրջանի որոշման փաստերը սխալ եղել և/կամ օրենքը խախտվել: Բողոքարկումը պետք է ներկայացվի CDE-ին՝ նախապես ներկայացված բողոքի պատճենի և այդ բողոքի վերաբերյալ կրթաշրջանի որոշման պատճենի հետ միասին (5 CCR 4632):

Երբ անօրինական խտրականության բողոքի պատասխանողը (ինչպես օրինակ խտրական ոտնձգություն, ահաբեկում կամ բռնարարք) բավարարված չէ կրթաշրջանի վերջնական գրավոր որոշմամբ, նա բողոքարկուի նման կարող է գանգատ ներկայացնել CDE-ին:

Երբ CDE-ն հայտնի, որ կրթաշրջանի որոշումը բողոքարկվել է, գերատեսուչը կամ նրա հանձնակատարը պետք է CDE ուղարկեն հետևյալ փաստաթղթերը (5 CCR 4633).

1. Սկզբնական բողոքի պատճենը

Համայնքային հարաբերություններ

Բողոքի համընդհանուր ընթացակարգեր

2. Գրավոր որոշման պատճենը
3. Կրթաշրջանի կատարած հետաքննության բնույթի և ծավալի ամփոփումը, եթե ներառված չէ որոշման մեջ
4. Հետաքննության գործերի պատճենը, ներառյալ, բայց ոչ սահմանափակված բոլոր գրառումները, հարցազրույցները և կողմերի ներկայացրած և հետաքննողի հավաքած փաստաթղթերը
5. Բողոքը լուծելու համար ձեռնարկված գործողության զեկույցը
6. Կրթաշրջանի Բողոքի համընդհանուր ընթացակարգերի պատճենը
7. CDE-ի պահանջով առնչվող այլ տեղեկություններ

Առողջություն և անվտանգության բողոքներ Կայիֆոռնիա Նահանգի Նախադպրոցական ծրագրում

Արտոնագրման արտոնյալ պայմաններով Նախադպրոցական ծրագրի (CSPP) յուրաքանչյուր դասասենյակում պետք է տեղադրվի ծնողներին/խնամակալներին և աշակերտներին ու ուսուցիչներին Title 5-ի կանոնակարգերի առողջության և անվտանգության պահանջներին ծանոթացնող ծանուցում, որոնք կիրառվում են Նախադպրոցական CSPP ծրագրերի հանդեպ՝ Առողջապահության և անվտանգության օրենսգրքի 1596.7925 Մասի համաձայն և պետք է նրանց տեղեկացվի, թե որտեղից կարող են ձեռք բերել այդ պահանջներին անհամապատասխանություն ենթադրող բողոքի ձևը: Կրթության օրենսգիրք 8235,5

Ցանկացած բողոք, որը վերաբերում է արտոնագրված CSPP ծրագրում առողջության կամ անվտանգության հետ կապված որոշակի խնդիրներին, պետք է ներկայացվի Նախադպրոցական ծրագրի վարիչին կամ հանձնառու անձին և կարող է ներկայացվել անանուն: Բողոքի ձևը պետք է նշի բողոք ներկայացնելու վայրը և պետք է պարունակի հատված՝ նշելու, թե արդյոք բողոքողը ցանկանում է պատասխան ստանալ իր բողոքին: Եթե որոշվում է, որ բողոքը Նախադպրոցական ծրագրի վարչակազմի լիազորություններից դուրս է, գործը լուծման համար պետք է ժամանակին հանձնվի գերատեսուչին կամ նրա հանձնակատարին 10 աշխատանքային օրվա ընթացքում:

Արտոնագրից ազատված CSPP Նախադպրոցական ծրագրում առողջության կամ անվտանգության խնդիրներին վերաբերող բողոքների քննությունը սկսվում է բողոքը ստանալու պահից 10 աշխատանքային օրվա ընթացքում (Կրթության օրենսգիրք 8235.5):

Նախադպրոցական կրթության ղեկավարը կամ հանձնակատարը հիմնավորված բողոքը շտկում են ողջամիտ ժամկետում՝ ոչ ավելի, քան բողոքը ստանալու պահից 30

Համայնքային հարաբերություններ

Բողոքի համընդհանուր ընթացակարգեր

աշխատանքային օրվա ընթացքում: Եթե բողոքող կողմը բողոքի դիմումում նշել է բողոքին պատասխան ստանալու ցանկություն, նախադպրոցական հիմնարկի ղեկավարը կամ գերատեսուչի հանձնակատարը պետք է բողոքի լուծման մասին զեկուցեն հայցադիմողին՝ բողոքի ներկայացման պահից 45 աշխատանքային օրվա ընթացքում: Եթե նախադպրոցական հաստատության վարիչը կազմում է այս զեկույցը, ապա տեղեկությունը պետք է միաժամանակ հաղորդի գերատեսուչին կամ նրա հանձնակատարին: Եթե բողոքողը գոհ չէ բողոքի լուծումից, նա իրավունք ունի բողոքը ներկայացնել Ուսումնական խորհրդի հերթական նիստին:

Բողոքողը կարող է կրթաշրջանի որոշումը գրավոր բողոքարկել CDE-ին՝ համաձայն 5 CCR 4632-ի: Ցանկացած նման բողոքարկում պետք է ներկայացվի որոշումը ստանալուց հետո 30 օրվա ընթացքում:

Եռամսյակային կտրվածքով գերատեսուչը կամ նրա հանձնակատարը պետք է խորհրդի հերթական նիստին և դպրոցների գերատեսուչին ամփոփված հաշվետվություն ներկայացնեն առողջապահության և անվտանգության վերաբերյալ բոլոր բողոքների բնույթի, լուծման, դրանց ընդհանուր առարկայի և լուծված ու չլուծված բողոքների քանակի վերաբերյալ:

Կանոններն ընդունվել են. 08/1985

Կանոնները վերանայվել են. 07/16/1991; 11/03/1992; 10/07/1997; 12/17/2002; 06/27/2006;
11/16/2007; 08/24/2010; 10/24/2011; 01/30/2014; 05/06/2014;
11/18/2016; 09/01/2017; 02/06/2018; 05/21/2018; 06/07/2019;
07/17/2020

(Նախկինում AR 1312)